

November 8, 1988

TRANSLATION OF AN ARMENIAN LETTER DATED SEPTEMBER 12, 1988

Deacon Serop Demirjian  
Bay Village, Ohio

Dear Deacon Serop:

In view of the fact that St. Gregory of Narek Armenian Church in Cleveland, Ohio, does not have a resident pastor, we herewith grant you permission to conduct the religious services indicated below as well as to attend to the spiritual needs of the faithful. This agreement is to remain in effect as long as you remain in the office to which you have been assigned:

1. Permission is granted to conduct all the services of the Armenian Church, except the sections where the presence of a duly ordained and annointed priest is necessary; specifically, saying "Peace unto you" and making the sign of the cross when blessing the people.
2. To conduct the Order of the Requiem Service, in the same manner as above.
3. To administer Holy Communion from the pix on the altar, to the sick who are confined in homes and hospitals.
4. In case of a Confession, you may use the general form for this service, without reciting the last two paragraphs "Reverend Father, I hold thee as reconciler and intercessor ..." and "The Absolution".

However, you may recite the Deacon's Litany - "Yegialks i khostovanoutyune abashkharootian ..." (ref. p.p.307-308, in 1947 Jerusalem, pociet size Book of Hours).

5. You are not permitted to perform Baptisms, Confessions, Absolutions, the Divine Liturgies and Weddings. These sacraments may only be performed by Ordained Priests. Furthermore, you may not bless water, a house, the soil, or seal graves during a burial service; or bless water and drop Muron during the service of the Blessing of Water on Christmas, or make a blessing during Antastan Service.

However, you may conduct the Orders of Trunpatzek and Khavaroum Services, Hayrabadagan Maghtank.

These instructions are brought to your attention for your edification and implementation of a deacon of the Armenian Church.

God's blessing to you in the execution of your duties.

Prayerfully,

Archbishop Torkom Manoogian  
Primate



ԱՐՄԵՆԱԿԱՆ ԵՂԵՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԵՍՏՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՍԱՏՈՍ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30525  
Սեպտեմբեր 12, 1988

Բարեջանքի  
Սերոբ Սրկ. Տեմիրճեան  
Պէյ Վիլէն.

Բարեջանքի Սերոբ Սարկաւագ,

Նկատի ունենալով որ Գլխվրնտ Օհայոյի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցին մնայուն Հոգեւոր Հովիւ չունի, այսու գիրով արտօնութիւն կը շնորհենք ձեզի որ հետեւեալ կրօնական արարողութիւնները կատարէք եւ հաւատացեալներու հոգեւոր կարիքը մատակարարէք, որքան ժամանակ որ մեր նշանակած պաշտօնին մէջ կը ծառայէք:

- 1.. Կատարել Հայց. Եկեղեցոյ բոլոր ժամերգութիւնները, բացի այն մասերէն որ ձեռնադրեալ եւ օծեալ քահանայի մը ներկայութիւնը անհրաժեշտ է: Օրինակ, ժողովուրդը օրինել, «Խաղաղութիւն Ամենեցուն» ըսել եւ ժողովուրդին վրայ խաչակնքել:
- 2.. Հոգեհանգստեան Կարգ կատարել, նոյն հասկացողութեամբ:
- 3.. Սուրբ Պատարագի ընթացքին սրբագործուած եւ սպա սրբատուփին մէջ պահուած Սուրբ Հաղորդութենէն մատակարարել հիւանդներուն՝ տուներու եւ հիւանդանոցներու մէջ:
- 4.. Խոստովանանքի համար գործածել հաւաքական խոստովանանքի բանաձեւը, առանց վերջին տունին, այսինքն «Հայր Սուրբ, գրեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս ...»: Նաեւ առանց «Ողորմեացի քեզ մարդասէրն Աստուած ...» արձակումի բանաձեւը արտասանելու: Ասոնց փոխարէն կարդալ Սարկաւագի քարոզը՝ «Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով գոյս միածնի Որդոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր ...», որ կը գտնուի «Առաւօտեան Ժամերգութեան » վերջաւորութեան՝ «Բանից իմոց ոկն դիր, Տէր ...» սաղմոսէն առաջ: Այս քարոզը կարելի է գտնել Երուսաղէմ տպուած, 1947, գրպանի փոքրիկ ժամագիրքի 307-308 էջերուն վրայ:

5.- Հասկանալի պետք է ըլլայ որ արտօճուած չէք կատարել այն Խորհուրդները կամ արարողութիւնները՝ որոնք ձեռնադրուած եւ օծուած քահանային յատուկ են, այսինքն Մկրտութիւն, Դրոշմ, Արձակում, Ս. Պատարագի մատուցում, Պսակ Ամուսնութեան: Ինչպէս նաեւ որեւէ արարողութիւն՝ ուր չտարկայ մը օրհնելու կամ Միտոնով օծելու անհրաժեշտութիւն կայ: Օրհնակ՝ ջուր օրհնել, տուն օրհնել, Թաղման Կարգին մէջ՝ հող օրհնել, գերեզման կնքել, «Անդաստան» կատարելով «օրհնել», Զբօրհնէքի ատեն ջուրը օրհնել եւ Միտոն կաթեցնել, եւայլն: Բայց կարելի է Հայրապետական Մաղթանք եւ Դոնքացէքի ու Խաւարման Գիշերի Կարգը կատարել:

Սոյն հրահանգը կը յանձնենք ձեր ուշադրութեան՝ ի գործադրութիւն:

Միտոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Օրհնակ՝ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Ծիսական Խորհուրդի Ատենապետին